

# ՀԱՅԱՍՏԱՆ

## «Կանաչ Էներգիան» հանուն Շիրակի մարզում «Կանաչ» սոցիալ-տնտեսական առաջընթացի Ծրագիր



Երրորդ բնություն ՀԿ



Քիոսոփիա ՀԿ



### ՆԱԽԱԴԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմուտքում: Այն երկրի ամենաաղքատ տարածաշրջանն է՝ գործազրկության ամենաբարձր մակարդակով: Բնակչության զգալի հատվածը կազմում են սոցիալապես անապահով ընտանիքները, որոնց հիմնական կարիքների ապահովումը՝ մատչելի կենտրոնացված ջեռուցումը, տաք և/կամ մշտական խմելու ջրի մատակարարումը, հանդիսանում է առօրյա գերիսնդիր: Նույնիսկ հանրային շենքերը, ինչպիսիք դպրոցներն ու մանկապարտեզներն են, հաճախ ապահովված չեն մշտական ջեռուցմամբ և տաք ջրամատակարարմամբ, ունեն սանիտարական և առողջապահական խնդիրներ: «Կանաչ Էներգիայի» վերաբերյալ իրագրելու մակարդակը ցածր է: Ցածր է նաև տեղական իշխանությունների, ԶՀԿ-ների և ընդհանրապես քաղաքացիների գիտելիքների մակարդակը՝ նրա վերաբերյալ, թե ինչպես «Կանաչ Էներգիայի» կիրառությունը կարող է օգնել լուծելու առկա սոցիալ-տնտեսական խնդիրները:

### ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է վերականգնվող Էներգիայի հիման վրա ստեղծել կայուն զարգացման հասանելի և գործնական պայմաններ՝ դրանով իսկ ուղղակիորեն նպաստելով Շիրակի մարզում աղքատության նվազեցմանը: Ծրագրի կողմից կներդրվեն վերականգնվող Էներգետիկայի տեխնոլոգիաներ (օրինակ, կենսագազի ստացման, արևային Էներգիայով ոռոգման և ջրի թորման համակարգեր) հանրային և մասնավոր օգտագործման համար, ինչպես նաև՝ եկամտի աղբյուր հանդիսացող «Կանաչ» օբյեկտներ (օրինակ՝ արևային օդատաքացուցիչով կամ ջրատաքացուցիչով ջեռուցվող ջերմոց): Բացի այդ՝ տեղական իշխանություններին և այլ շահագրգիռ կողմերին կտրամադրվի տեղեկատվություն ցածր ածխածնային տեխնոլոգիաների վերաբերյալ, որպեսզի գործառնական և քաղաքականության մակարդակով իրականացվի փորձի ներդրումը:

### ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մինչև 9 ցուցադրական տեղամասերի հիմնում,
- Տեղական համայնքների ուսուցում,
- Ուսուցողական այցեր և գործնական խորհրդատվության տրամադրում շահառու կողմերին (ՏԻՄ-եր, ձեռներեցներ, տեղի բնակչություն),
- Մինչև 15 համաֆինանսավորվող փոքր դրամաշնորհների տրամադրում համայնքներին, մասնավոր անձանց և գործարարներին,
- Մասնավոր ձեռներեցությամբ զբաղվող 10 անձանց վերապատրաստում՝ որպես «Կանաչ ծառայություններ» մատուցողներ,
- Շիրակի մարզում «Կանաչ Տեխնոլոգիաների Հայկական Կենտրոն»-ի հիմնում,
- Աջակցություն տեղական իշխանություններին «Կանաչ» սոցիալ-տնտեսական ոլորտի համալիր պլանավորման և բյուջետավորման գործընթացում,

▪ «Կանաչ Էներգետիկայի» վերաբերյալ հանրային իրազեկում

### ԾԱՀԱՌՈՆՆԵՐԸ

- 800 անձինք (երիտասարդներ, ուսանողներ, սեփականատերեր, ֆերմերներ), Շիրակի մարզի ձեռնարկատերեր և կոոպերատիվներ,
- 20 ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ, 4000 ուղղակի օգտագործողներ/ շահառուներ
- 100 տեղական ինքնակառավարման մարմինների և մարզային իշխանությունների ներկայացուցիչներ,
- 30 կազմակերպություններ և Էներգետիկայի ոլորտի մասնագետներ:

### ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԲՅՈՒՋԵ՝ 319.475 ԵԿՐՈ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ՝ ՄԱՅԻՍ 2015Թ. - ՄԱՅԻՍ 2017Թ.

### ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀԻՆՑԱԿԵՐԿ ԱՎԱՏՐԻԱ ԻՆԹԵՐՆԵՇՆԸԼ
- «ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԻՆՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
- «ՖԵՐՏԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
- «ԲԻՈՍՈՖԻԱ» ՀԿ
- «ԵՐՐՈՐԴ ԲՆՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

### ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՆԻԿՈՆ ՄԱՐԻԱ ԲԱՈՒԵՐ,  
ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԾԱԾՐՁԱՆԱՅԻՆ ԴԵԿԱԿԱՐ ՀԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ  
ՀԵՌ.: +43 1 40 57 500-0, ԷԼ.ՓՈՍ. [NICOLE.BAUER@HWA.OR.AT](mailto:NICOLE.BAUER@HWA.OR.AT)  
[HTTP://WWW.HILFSWERK.AT/HWA](http://www.hilfswerk.at/hwa)

ԱՐՍԵՆ ԿԱՐԱԴԵՏՅԱՆ, ԾՐԱԳՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ  
ԲԶԶ. +374 98 40 14 15, ԷԼ.ՓՈՍ. [ARSKARAPET@YAHOO.COM](mailto:ARSKARAPET@YAHOO.COM)

ԽԱԶԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ, ԾՐԱԳՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ  
ԲԶԶ. +374 93 22 12 03, ԷԼ.ՓՈՍ. [FERTI.CC.NGO@GMAIL.COM](mailto:FERTI.CC.NGO@GMAIL.COM)

ԳԵՒՈՐԳ ԴԵՏՐՈՍՅԱՆ, ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ  
ԲԶԶ. +374 93 71 45 33, ԷԼ.ՓՈՍ. [BIOSOPHIA@GMAIL.COM](mailto:BIOSOPHIA@GMAIL.COM)

ՌԱՖԱՅԵԼ ՄԻԽԱԵՐԱՅԱՆ, ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ  
ԲԶԶ. +374 94 53 58 59,  
ԷԼ.ՓՈՍ. [THIRDNATURENGO@YANDEX.RU](mailto:THIRDNATURENGO@YANDEX.RU)

### ԾՐԱԳՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՋԱԿՑՈՒՄ ԵՆ



WITH FUNDING FROM  
**AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION**

Նուսանկարները. «Երրորդ բնություն» և «Քիոսոփիա» ՀԿ-ների